# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4418-Ա « 30 » հոկտեմբերի 2025թ.

ԱՆՈՒՇ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 3-րդ մասի 1-ին կետով, 111-րդ հոդվածի 2-րդ մասով, 130-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Անուշ Սարգսյանի հետ 2015 թվականի նոյեմբերի 2-ին կնքված աշխատանքային պայմանագրի 5.1-ին կետը, 2020 թվականի նոյեմբերի 2-ին կնքված համաձայնագրի 1-ին կետը և 2025 թվականի հոկտեմբերի 21-ի N Ն/62448-25 ծանուցումը՝

1. Անուշ Սարգսյանին՝ 2025 թվականի նոյեմբերի 4-ից ազատել «Երևանի մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից, աշխատանքային վերջին օր համարելով 2025 թվականի նոյեմբերի 3-ը:

2. «Երևանի մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության ադմինիստրատիվ կառավարման գծով փոխտնօրեն Անուշավան Զաքարյանին:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**